

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՆՊԱՐՏԵԼԻ ՈԳԻՆ, ԴԱՐԵՐՈՒ ՍԷՋԷՆ

Հայաստանի աշխարհագրութիւնը շատ լաւ կը բացատրուի հայ ու օտար դիտնականներու կողմէ, մանաւանդ երբ կարդանք Լիւնչի Arménia, Ֆրիթեֆ Նանսէի Arménie et le Proche Orient հատորները եւ հայ հեղինակներու խնամ ուսած գործերը:

Հայաստան անունը կրող առիական ընդարձակ աշխարհը ունի բնական առանձնայատուկ առաւելութիւններ, բայց ունի նաեւ մեծ դժուարութիւններ, որոնք ազդած են հայ ցեղին ֆիզիքականին ու նկարագրին վրայ:

Անկասկած Հային դատ աշխարհիւ վրայ ոչ մէկ ուրիշ ցեղալիտի կարենար դիմադրել ու տուկալ աշխարհագրական աննպաստ դիրքին ու դժուարութեանց, կամ նմանապէս օգտուել նոյնին ուղաւորութիւններէն, ինչ որ այսօր աշխարհածանօթ իրականութիւն մըն է:

Հայաստանէն անցած են բազմաթիւ խուժող բարբարոս կամ քաղաքակիրթ ցեղեր կամ պետականացած ազգեր: Բայց Հայը պահեց իր ազգութիւնը ու հակառակ անհամար սոսնձութիւններուն, մինչեւ այսօր Հայուն իրաւունքն է ամբողջական Հայաստանը, իր բոլոր բաժանումներով՝ Մեծ Հայք, Փոքր Հայք ու Կիլիկիա, սկսելով Կասպից ծովու մերձ Մուղան անապատէն ու Կուր գետին հովիտներէն, ու երկարելով մինչեւ Տաւրոսեան լեռներն ու Միջերկրական:

Հակառակ ահադին դժուարութեանց, Հայը

կարողացած էր նոյն իսկ իր մէջ ձուլել շատ մը արշաւող կամ այցելու ցեղեր ինչպէս Սեւորդները ու հրեայ զաղութները եւ դեռ ուրիշներ:

(Տես ի մէջ այլոց Հելպանի «Die Altarmenische Ortsnamen»):

Հայը կարողացած էր նոյն իսկ իբր աշխարհակալ Հայաստան արշաւող Պարսիկներէն, Ասորիներէն ու Յոյներէն շատերը հայացնել: (Տես Գէորգ Մեսրոպի «Հայաստան»-ը ու մանաւանդ Ա. Ալպոյանեանի «Պատմութիւն Հայ Գաղթականութեան» գործը):

Արտաշեսեան հարստութեամբ (190 Ն.Ք.) կը սկսի հայկական ուրոյն լիզուով ու կրօնելով, ցեղային ուրոյն սովորութիւններով զեղուն յառաջադէմ հայկական կայսրութիւն մը, որ Քրիստոսէ առաջ Ա. դարուն պահ մը կարողացաւ երկրապետել իրայ փայլել իբր զօրաւոր եւ քաղաքակիրթ պետութիւն մը որուն սահմանները, ելելով ամբողջական Հայաստանի սահմաններէն դուրս, կ'ընդգրկէին Պաղեստինէն մինչեւ կովկասեան լեռները ու կեդրոնական Մարաստանէն մինչեւ հեռաւոր Կիլիկիա, Կասպովիկիա, Փիւնիկէ, Ասորիք ու լաջնաստարած Միջագետք երկարող երկրները: Այսպիսի հրաշք մը երեւան եկած էր միայն Տիգրան Մեծի օրերուն (96-55 Ն.Ք.), որ սահմակեցուցած էր Հռոմը, Պարթևաստանը, Սելեւկեան պետութիւնը ու համակ Ասիան:

Պահն է երջանիկ գերբզգայնութեան, Մաշուող կուրծքին տակ կարօտ մը կայ նուրբ, — Տեսնե՛լ իր տննը, ինքզնիքը երախտ, իւրեքեքն ամբողջ կայծկլտուք սուրբ:

Ներաշխարհիւ մէջ ալեծփա՛նք մը գիրգ...
Ջիւն նուալ մ'անմիւր կարծես կը տանի
Համգրբումս մ'անտեսն աւր կիթաւ, սըրինգ
Եղեմ կը հիւսն աշխարհէն գաղտնի:

Եւ ծաղաւ հոգիս՝ յանկարծ լիացած՝
Պարցելը կառայ տարաբալտ սիրանց,
Ու երազը նուրբ կը դառնայ քնքարած՝
Մօր մը սիրաւատ երկուսին համգոյն:

Բանաստեղծութեան ոլորտը ետակ
Աստղ է, արեւ է, երկինք է եւ սէր.
Տա՛ր գիւ միշտ, Աստուած՝ այդ գիրկը ներմակ,
Ինք մետաքս բոժոժ, եւ մէջը թիթեւ:
1948 ՆԱՋԻՆԻ ՏԵՐ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

Հայ ազգը իր մայր հայրենիքին մէջ թաղա-
դարձիկալ օտուճառաւոր էր եղած էր դրեթէ 1700
տարիներ (600 Ն. Ք., մինչեւ 1080 Յ. Ք.) ու
միայն ժԱ. դարէն յետոյ խանգարակաց Լա-
յաւառանի ցեղադրակաց վիճակը, չոն խոժող
Սելճուքներուն, Խօզպէքներուն ու այլ թաթար
բարբարոսներու արշաւանքներուն պատճառաւ,
որոնք դարբնով կեղեցեցին Հայ ժողովուրդը ու
բաւական այլափոխեցին հայկական ինքնուրոյն
քաղաքակրթութեան անսնճալատկութիւնը, ու
այլափոխեցին նաեւ Հայաստանի բնակչութեան
նկարագիրը, ու պատճառ դարձան հայկական նո-
րանոր դաղթերու որոնք տկարացուցին մեր միջ-
նախարհին կենսունակութիւնը: Հայը սակայն,
իր դաղթած դէթ մերձակայ երկիրները հայա-
ցուց: Ամբողջ Փոքր Հայքի ու Կիլիկիոյ մէջ հայ
պետութիւններ ստեղծուեցան: Ամբողջ Փոքր Ա-
սիան Հայերով բնակեցուցաւ, իսկ Եւրոպայի մէջ
բիւզանդական կայսրութիւնը շրջան մը բոլորե-
լին հայացաւ, հայ կայսրերու, հայ իշխաննե-
րու, հայ զորավարներու եւ հայ պատրիարքնե-
րու շնորհիւ:

**

Հայաստանի կամ Մեծ Հայքի թաղաւորու-
թիւնը վերջ էր գտնէր 1045ին, բայց Բիւզանդիո-
նի ճովանակութեան ներքեւ քանի մը տարիներ
եւս շարունակուեցան Փոքր Հայքի թաղաւորու-
թիւնները:

Գրիգորիոս առաջ Բ. դարուն, Գայլ եւ Ալիս
գետերով վերին ճովանդներ իրենց եկրաւառան
գանգուածներով, իբր «Փոքր Հայք» կը ճանչը-
րին օտար մատենագիրներուն կողմէ, որոնցմէ
կը յիշատակեն Ժ. Լօսանը L'Arménie entre
Byzance et l'Islam Այսպիսի եղակի երկրի մը դո-
յութիւնը կը ճաննան նաեւ Սորաբոն եւ Պիլիոս:
Սորաբոն կը հաւատէ որ Փոքր Հայքը ունէր իր
հայ թաղաւորները որոնք շատ անգամներ դաշ-
նակիցներ էին բուն Հայաստանի կամ Մեծ Հայքի
հայ թաղաւորներուն, ու կ'աւելցեն որ Փոքր
Հայքի թաղաւորները կ'իշխէին նաեւ Խաղտեաց
վրայ, այսինքն Լազիստանի գաւառին, որ հայ
իշխաններուն քաղաքական իրաւունքը կը մօտե-
ցնէր Սեւ ծովուն: (Սորաբոն, ԻԲ. 3: 18): Բա-
ւական ժամանակ վերջ, Պոստոյի թաղաւորու-
թեան մաս կազմեց Փոքր Հայքին կարեւոր մէկ

մասը: Բայց Մոկայ ընդարձակ երկիրը, Տիգրան
Մեծին կրանիտեայ թաղաւորութեամբ մաս կազմեց
Մեծ Հայքին: Փոքր Հայք, յաճախ 10,000 հայ
զինուորներով (ձիաւոր) կը մասնակցէր պատե-
րազմներուն:

Փոքր Հայքի թաղաւորութեան վերջ, ունե-
ցանք նաեւ Կիլիկիոյ հայկական պետութիւնը, ո-
րուն բնակչութեան ամենաբազմամարդ շրջանը
մինչեւ երկը միլիոնի կը բարձրանար:

Գրիգորիոսն ունենէն առաջ, Հայերը ընդհան-
րապէս համակարալի վերաբերումներ ցոյց կու
տային դրացի Պարսիկներուն կամ Պարթեւնե-
րուն, բայց քրիստոնէութիւնը ընդունել վերջ,
ստեղծ մօտեցան Բիւզանդիոնայ Արեւմուտեան,
Հռոմին կամ Բիւզանդիոնին: Այս ընթացքը աղե-
սաբեր եղաւ Հայոց համար, որովհետեւ երբ Ա-
րեւմուտքի ու Արեւելքի երկու հօր պետութիւն-
ները իրարու հետ կը պատերազմէին, Հայաստան
իրը կուռախնձոր երկրի՝ յաճախ չէր կրնար իր
չէզոքութիւնը պահել, ու միոյն կամ միւսին
խժգոսութիւններուն առարկան կը դնար: Այս
պարագան պատճառ եղած էր հայկական նորա-
նոր դաղթականութիւններուն, որով մայր երկիրը
որոշ չափով ուժեր կը կորսնցնէր՝ սկսելով Ար-
շակունեաց թաղաւորութեան շրջանն (52-428):

Արեւմուտքը գաղթող Հայերէն ծնան միջադ-
դային համառ շահող թագաւորի անձնը, որոնք
Հռոմի մայրցի կը կարծուէին մինչեւ մօտիկ ժա-
մանակներ:

Այսպիսի համառաւոր Հայերէն մին էր հոն-
աոր Պրոյերեսիոսը, որ մեր ճաննցած Պարոյր
Հայկազնն է (272-363), որ ծնած էր Կիլիսոնի
մէջ (Փոքր Հայքի արդի Կէօքսիւնը): Պրոյերե-
սիոսի ժամանակակից էր նաեւ հայազգի ուրիշ
հետաոր մը, Լիբանիոսը, որ Պարոյրէն հետ միա-
սին Աթէնքի մէջ ունեցաւ թագաւորի աշակերտու-
ներ: Միլանի Արքեպիսկոպոս եղած էր հայազգի
Արշակ անուն անձ մը, որ ծնած է Սեփ- Արգա-
սիո Արմէնո անունով: Այս կարեւոր անձը եղած
էր Պրոյերեսիոսի ու Լիբանիոսի աշակերտնե-
րէն մին: Պրոյերեսիոսի աշակերտներ եղած
էին նաեւ, միջադարձին՝ համառ ունեցող
երկու եկեղեցական հայրեր, սուրբ Բարսեղ Կե-
սարացի ու Սուրբ Գրիգոր Նազիանզացի, որոնք
ծաղկուն ալ հայկական էր, ու որոնք նախնիքն
ալ Հայաստանէն գաղթած էին: (Տես Ա. Այգո-

յաճանի Գառմուքինն Հայ Գաղթականութեան)։

Անտիոքի մէջ կը յիշուի Լիբանիոս անուն հայազգի աւփեսա ու ճարտասան մը, որուն աշակերտած էին մեծահռչակ Յովհաննէս Ոսկերթրանն ու Նոյն իսկ Թէոդորոս Մոպսուեստացին, որուն գործերը ապագային մեծ ազդեցութիւն պիտի ունենային Նեստորական եւ Ուղղափառեան անվերջանալի պայքարներու ընթացքին։

Այս հայ մեծ ճարտասանին աշակերտած էր նաեւ Ղեւոնդիոս Հայկազն, որ օրին մէջը Աթէնքի Համալսարանի ուսուցչապետը պիտի ըլլար (419-429 Ք. Յ.)։

Բոլոր ասոնց ցոյց կու տան հայկական քառաջադէմ ոգին ու մեծ իմաստութիւնը, որ օտար հորիզոններու տակ կը շողար։ Բայց Հայաստանն էր անոնց ծննդավայրը, իսկ Հռոմէ կամ Բիզանդիոն միայն ներշնչարանը կը հանդիսանային հայ երկրին մէջ ծնած հայ պատասխան ցեղին։

Արշակունեաց Թազուտութեան անկումէն վերջ, հակառակ մեզ համար ստեղծուած այնքան դժուար կացութեան, Հայ տոկունութիւնն ու անդիւ նկարագիրը միշտ պայրիցան Թէ՛ հայրենիքին մէջ եւ Թէ՛ հայրենիքէն դուրս։

Բրիտանեան Կառաքը Հայաստանի ու Արեւելքի մէջ վառ մնաց հայ մարտիրոսներու զերեմական զոհաբերութիւններով, որոնցմէ ծանօթ են մեզ սիրապարծութիւնները Վարդանան հեղոսներուն, որոնց այնքան բուռն կերպով ընդդիմացան Սասանեան Պարսիկներու յարուած կրօնական հայամեծքներուն։ Հայաստանն ունեցաւ իր աստուածաբան եւ իմաստասէր մեծ հայրապետները, որոնք իրենց գործերով ու զբոսութիւններով հայկական անբիծ հաւատքը յաւերժացուցին, ու այդ յանձնարարութիւնն աւելցնելով պարտինք մեր կենսունակութիւնը եւ ազգային տոկունութիւնը որ զարկերու ընթացքին պահպանուեցան զլիաւորապէս Հայաստանեայց եկեղեցւոյ շնորհիւ։

Հայաստանէն դուրս ալ հայ եպիսկոպոսներ ու պատրիարքներ հրաշքեր գործեցին եւ բաւե միայն յիշատակել որ Յոյն Օրթոտոքս եկեղեցւոր կարեւորագոյն պատրիարքներէն ո՞մանք հայազգիներ էին, ինչպէս Յունաց Փոտիոս տիեղեւական պատրիարքը, որ երկու անգամ զաւ բարձրացաւ, Յովհաննէս Կրամազդիկոսը (գերակա-

նազէտ), Ստեփաննոս (Լեւոն Զ. կայսեր եղբայրը) Թէոփիլակոսոսը, Սերգիոսը ու ղեռ շատ ուրիշներ յոյն եկեղեցւոյ նշանաւոր պատրիարքներ եղած էին, ու յոյն կարծեցեալ հայ հայրապետները յաճախ պատարագած ու քարոզած էին Կոստանդնուպոլսոյ Սուրբ Սոփիա երեմէի մեծ տաճարին մէջ, ու կայսր օժած էին հայազգի ու յոյն իշխաններ։

Բիզանդեան կայսրութիւնը որ ունեցաւ հայար տարիէ աւելի տեւողութիւն եւ 100է աւելի կայսրեր, միշտ վայելած էր հայ տարրին կարեւոր օժանդակութիւնը։

Այս կը վկայեն բազում Եւրոպացիներ, որոնցմէ կրնամ յիշատակել Բրաւէ, Շելժոպէր-ժէ, Լօրան եւ ուրիշ յայտնի պատմագէտներ։ Յոյն եւ հայ հեղինակներ ալ խօսած են այս նիւթին մասին ու պարզած են հայկական գործակցութեան արժէքը։

Այս հարցին շուրջ գրած են մեր պատմիչներէն Սեբէոս, Յովհան կաթողիկոս, Ասողիկ, Վարդան պատմիչ, Կիրակոս Գանձակեցի, Սեմուէլ Անեցի, Առաքել Դաւրթեցի, Սմբատ Գունտաղցապալ, Միքայէլ Սյրիւմանցի, Մաթէոս Ուսահայեցի ու Լատիվներուցի։

Յոյն մատենագիրներէն Մենանտրոս, Պրոկոպիոս, Ագաթիոս, Թէոփիլակոսոս - Սիմոկազա, Թէոփանոս խոստովանող, Կեղերեսոս, Կիլիկաս, Գէորգ Կրօնաւոր, Սուրբ Նիկիիփոր (պատրիարք), Մանաս, Նիքիմիոս, Կենեսիոս, Պահմիոս, ու ղեռ շատեր լայն տեղ տուած են բիզանդական պատմութեան, որու մասին լուսաւորն տեղեկութիւնները կրնանք քաղել երբ կարդանք 1729-ին ու 1841-ին տեսած Corpus historiae Byzantinae պատմագիտական գործերու զոյգ շարքերը որոնց մէջ կը գտնենք հայ կենսունակութեան ու հայ յայդողութիւններու յատկացեալ ամբողջ զլուները։

Բիզանդական կայսրութեան առաջին շրջաններուն, Բիզանդացիք ղեռ կիսահռոմէական կը համարուէին, բայց պետութիւնը բոլորովին յունացաւ առաջին հայազգի կայսրերու դարձրացումէ թուականներէն սկսեալ։

Հայ ազգը Բիզանդիոնի տուած է կայսրեր, զորավարներ, վարչական գէմբեր, ինչպէս նաեւ

օրէնսդէտներ, զիտուններ ու հեղինակաւոր եւ-
կեղեցականներ:

Հեղինակաւոր՝ անզղիացի բրոֆէսէօր՝ Ժ. Վ. Պրեւսէլ, իր «The Roman Empire — 81—1081»-ի մէջ, լրջապէս տեսած է Ռոմանո 1910-ին, ընթարձակ տեղեկութիւններ կուտայ հայ տարրին մատու-
ցած ծառայութեանց մասին:

Սոյն հեղինակը կը զովարանէ հայ ցեղին կորովը, ձեռներէցութիւնը, առաքինութիւնները, որոնք պատճառ եղան «Յունական կայսրու-
թեան վարին ու քաղաքակրթութիւնը յաւերժա-
ցրելու» ու կ'եղբակացնէ որ յունական կայս-
րութիւնը իր կենսունակութիւնը կը պարտի ոչ այնքան իր յոյն պաշտօնեաներուն, որքան Հա-
յոց բերած բարեմիտ մեծ ծառայութիւններուն:

Հայազգի վեհապետներ յունական կայսրու-
թեան զանազան բարձրագոյն սկսեալ 582 թուակա-
նէն, երբ անոր զահաւանէն էր Սորիկ Հայկազն
կայսրը, ու շարունակեցին Յունաց վրայ իշխել
մինչեւ Ռիթա կայսրուհին (1296-1333), որ քոյրն
էր Հայոց Հեթում Բ. թագաւորին: Այս մեծ
չըլնալէն, Հայ ազգը Յունաց կայսրութեան բազ-
մաթիւ զօրապարսիւր ու վարչապետներ տալէն
զատ, տուաւ մանաւանդ 50ի մօտ կայսրեր, կայս-
րուհիներ, որոնցմէ 18-ը միահեծան կայսրեր էին,
10 հայ կայսրուհիներ, 10 հայ զահակից կայս-
րեր եւ 8ը հայ թագապահանքներ:

✱

Բայց ի՞նչ բրած է այս պատուական հայ
ցեղը իր բնաշխարհին մէջ, որուն աշխարհադա-
ւան ներհակ գիրքը Հայոց զատ պիտի ոչնչացնէր
աշխարհի ուրիշ ունէլ ցեղ ու ժողովուրդ:

Մայր, իր առաջին հրաշքները նախ դործած
էր իր անյայնքի երկրիմ մէջ, ու յետոյ միայն
օտարութեան մէջ:

Հակառակ Հայաստանի տեւական անապատ-
վութեան, անոր բոլոր օտար ցեղերու իբր անցը
ծառայելուն, անոր անտեսական զարգացման
արգելքներուն, հայ ազգաբնակչութեան յարա-
տեւ մեկուսացման, Հայաստանի մէջ պատահած
յուճախաղէպ երկրաշարժներուն ու բնական ու-
նի աղէտներուն, անոր կենդանաւոր պատե-
րազմներուն, անոր կրած յեղեղումներուն, աւա-
րառութեանց, ջարդերուն, բռնի տեղահանու-
թեանց, օտար տէրերու կողմէ անոր հասցուած

շարիքներուն ու զեւ հազար ու մէկ դժուարու-
թիւններուն, Հնիւ ԱՅԳՎ Դեմի ԿԱՊԻՒ, ու կ'ապ-
րի պատուաբեր կեանք մը, իր տոհմային լեզ-
ւով, կրօնքով եւ այլ արժանիքներով զեղապարդ-
ուած ու կ'ապրի իր երբեմնի Մեծ Հայքին մէկ
փոքր բայց ընտրուած ու պատմականօրէն մե-
ծարժէք անկիւնին մէջ:

Դադաքական իր աղէտներուն դործած չարի-
քը շատ անգամներ բազմապատկուած էր Հայաս-
տանի մէջ պատահած յաճախակի երկրաշարժնե-
րով:

Կ'արժէ հոռ յիշատակել թէ Հայաստանի տասնե-
րեք կարեւոր կենդանիներու մէջ աղետաբեր երկ-
րաշարժներ տեղի ունեցած էին՝ սկսելով 341
թուականէն ու շարունակուելով մինչեւ 1926 թը-
ւականը, այսինքն 1585 տարիներու ընթացքին:

Դադաքար մը տալու համար Հայաստանի
մէջ պատահած անաւոր երկրաշարժներուն վրայ,
ստորեւ կը դնեմ հետաքրքրական ցուցակ մը:

1- Այրարատի նահանգին մէջ երկրաշարժ-
ներ տեղի ունեցան, 341, 862, 1319, 1681, 1819
ու 1840 թուականներուն:

2- Տարսիւրի մէջ երկրաշարժներ տեղի ունե-
ցած էին 614 ու 1114 թուականներուն, որոնք
ազգած էին նաեւ Հայկական Միջնադեղին ու
Կիլիկիոյ վրայ:

3- Կարնոյ, Բարձր Հայքի ու Սիւնեաց եր-
կրներուն մէջ երկրաշարժներ պատահեցան 728,
1659, 1791, 1860-1861 ու 1901-1902 թուականնե-
րուն:

4- Վայոց Ձորի մէջ, մեծ երկրաշարժ մը
տեղի ունեցած էր 869 թուականին, երբ 10,000
հոգիներ ողջ ողջ թաղուեցան:

5- Դուինի մէջ երկրաշարժներ տեղի ունե-
ցան 856ին, երբ 12,000 հոգի մէկ զիշերուան մէջ
մեռան, ու 858ին, 859ին, երբ մէկ տարուան ըն-
թացքին 120,000 հոգի մեռան, ու 893ին:

6- Հաւունից ու Ուրձնաց գաւառներուն
ու այլ վայրերու մէջ եօթն ամսուան տեւողու-
թեամբ երկրաշարժ պատահած էր 995ին:

7- Երզնկայի մէջ երկրաշարժներ պատահե-
ցան 1011ին, 1045ին, 1166ին, 1236ին, 1251ին,
1268ին, 1281ին, 1287ին, 1289ին, 1458ին
ու 1484ին (երբ երեք ամսուան ընթացքին
32,000 հոգի մեռան, 1482ին (երբ 30,000 Հայք

15,000 հոգի մեռան), ու 1578ին:

8.- Անիի մէջ երկրաշարժներ պատահեցան 1045ին ու 1131ին:

9.- Ամրողական Հայաստանի զանազան վայրերուն մէջ երկրաշարժներ պատահեցան 1219 թուականին:

10.- Վաղարշապատի մէջ երկրաշարժներ պատահեցան 1275ին, 1276ին, 1441ին, 1646ին, 1648-1649ին, 1701ին, 1704ին ու 1715ին:

11.- Պարսկահայքի մէջ՝ 1641ին, 1646ին, 1648ին, 1649ին, 1791ին, 1859ին, 1806ին, 1828ին, 1847ին, 1848ին, 1869ին, 1872ին ու 1902ին:

12.- Երեւանի մէջ երկրաշարժներ պատահեցան 862ին, ու 1678 - 1679ին:

13.- Լենինականի մէջ՝ 1926ին:

Արմէնը, սակայն, իր կրանիտեայ բազուիներով, Հայաստանի մէջ ապրեցաւ քանեօթ դար, իսկ բուն Հայաստանցիներ իր երկրին մէջ կը դորձէ 40 դարէ ի վեր:

Երբ հազիւ կը թուշայ Ուրարտուի նախահայ թագաւորութիւնը՝ ճրգ դարուն Բրիտանոսէ առաջ, ներս կը խուժէ դործունեայ ու դալափառ ազգէն ցեղը, ու իր հայկական դրօշմը ու անշնչիկ կնիքը կը դորձէ յարատեան աշխարհին միայ, որ՝ ըստ Աստուածաշունչին, եղած էր մարդկութեան օրանքը, Նոյեան փրկարար տապանին ընդունարանը:

Սուրբ Գրքին մէջ մատնանշուած դրախտափայր Հայաստանին ծոցը՝ մենք ունեցանք մեր սկզբնական դիցաբանութիւնն ու մեր հնագոյն քաղաքական անկախութիւնը, որ Մեծ Հայքի մէջ շարունակուեցաւ մինչեւ 1045 թուականը, ու յետոյ՝ Կիլիկիոյ մէջ մաքառեցաւ մինչեւ 1375 թուականը:

Այս երկարատեւ շրջանը կը սկսի հին Հայաստանի 11 մեծ նահապետներով, որոնց ծագումը կը սկսի, ըստ աստուածաշնչական աւանդութեան, Նոյ նահապետին Յաբէթ որդիէն:

Գամեր ու Թրիաս կը յաջորդեն Յաբէթին, որոնցմէ վերջ կը ծնի Թորգոմ, որ հայրն էր Հայկ նահապետին, որ ըստ Սորենացոյն հիմնադիրն եղաւ հայ ազգին եւ հայ հայրենիքին:

Հայկին կը յաջորդեն Արմենակ, Արամայիս,

Ամասիա, Գեղամ, Հարամ ու Արամ, որոնց օրով նախամարդուն՝ Ադամին դրախտափայր՝ երկիրը բուրբոյլին փոխանցուեցաւ Հայոց Ազգին: Հայկազանց աւանդական շրջանը կը վերջանայ Սկայրդիի ու Պարոյրի զահակալութեամբ, որոնցմէ առաջ, ու Արամէն վերջ, հետզհետէ Արարտեան աշխարհին մէջ իշխեցին հետեւեալ հայ նահապետները՝ Արա, Անուշաւան, Պարէտ, Արբակ, Զաւան, Փառնակ, Սուր, Հաւանակ, Շաւարշ, Նորայր, Վստապ, Կար, Գոռնակ, Հրանտ, Ընձակ, Գդակ, Հօրոյ, Զարմայր, Պերձ, Արուն, Բազուկ, Հոյ, Յունակ ու Կայակ, ըստ Սորենացոյն:

Բայց հայ պատմահայրը եւ օտար պատմիչներ՝ Հայաստանը ծածկող անորոշութեան թողը վերցնելով, մեզ կը պարզեն «Երուանդունեաց» հայ իսկական պետութեան անդրանիկ թագաւորութիւնը, որուն մէջ կարող ինքնական էր Տիգրան Ա., որուն մասին յստականշական էջեր գրած է յոյն գիտնական ու զօրավար Քսենոփոնը: Հայաստան գրաւած էր միջնադարին քաղաքական թատերաբեմին վրայ իր որոշ տեղը:

Մարաց Կիւքսար (655-595) ու Նարուպայասար (626-605) աշխարհակալ թագաւորներուն դործնադարար կ'ըլլայ Հայոց Պարոյր թագաւորը, իսկ Բաբելացոց Նարուգոդոնոսոր մեծ արքային եւ Մարաստանի Ափսահակ թագաւորին հետ գործակցեցաւ Հայաստանի Երուանդ Ա. վեհապետը:

Սորենացիներ իր դործին մէջ, Ժողովրդական երգ մը ունի այս թագաւորին մասին, որ կ'երգուէր 3000 տարի առաջ, յիշատակելով անոր Վարդգէս անուն փեսային մէջ հովուերգութիւնը.

Հատուած գնացեալ Վարդգէս մանուկ,
Ի Տուխաց գաւառէն ըզփառաղ գետով.
Եւ եկեալ Ուստեալ ըզՇրէշ բլրով,
Զարտմէտ քաղաքաւ՝ ըզփառաղ գետով,
Կոն ի կոփել ըզդուռն յոսանալայ արքայի:
(Տես Սորենացի, Բ. Կն.):

Այս Երուանդ Ա.ին կը յաջորդէ քաջակորով Տիգրան Ա.ը, որմէ վերջ կ'իշխին Առաւան, Ներսէս, Զարհ, Արմոզ, Բագամ, Վան ու Վահէ, որոնցմէ վերջինս իր ժամանակը ապրի կուգայ Հայաստանի

սահմանները:

Արմենիայու Հայաստան հաստատուելէն մինչեւ Մեծն Աղեքսանդրի շրջանը, ունեցանք քաղաքական, տնտեսական ու բարոյական կեանք ու սեփական հայրենիք:

Գաղութիւնը նոյն կերպով կը շարունակուի ցոյց տալով հայկական կաթնուտն կենսունակութիւն մը, հակառակ մեր երկրին քաղաքական, աշխարհագրական ու ցեղագրական դժուարութիւններուն:

Հայաստան ունեցաւ դեռ իր «Արտաշունեաց» ընծ թագաւորութիւնը (190 Ն.Ք. - 1 Յ.Ք.), որուն լրջանին Տիգրան Մեծին կայսրութիւնը պահ մը ահաբեկեց Հռոմը, որ Կիկերոնի բերնով Տիգրան Մեծը նկատեց իրը «Ասիոյ Հորադոյն թագաւորը»: Արտաշունեաց հարստութեան յաջորդեց Արշակունեաց Հայաստանը (52-428), որ մեղի առաւ առաջին բրիտանեայ հայ թագաւորները, որոնց առաջինը՝ Մեծն Տրդատ, ունէր ընդարձակ պետութիւն մը որ պահ մը վախ ազդեց Սասանեան Պարսիկ արքաներուն:

Ունեցանք «Բագրատունեաց» Հայաստանը, (885-1045), որուն լրջանին փայլեցան հայկական չինարարութիւնը, ճարտարապետութիւնը եւ քրիստոնէական ոգին, երբ մանաւանդ հայկական մարտաբազմին, Անիին «հազար ու մի» եկեղեցիներուն մէջ Աստուածորդուն առօրեայ պատարագները տեղի կ'ունենային միջին դարերուն, հակառակ որ բարբարոս ու հեթանոս կամ մահմադական ցեղերով պաշարուած էին:

Ու վերջապէս ողջունեցինք մեր «Ռուբինեան» պետութիւնը Կիլիկիոյ մէջ, Միջերկրականի գեղեցիկ մարզը ապերուն լիայ (1080-1375), որ թեւ ու թիկունք հանդիսացած էր 'Արեւմուտեղի քրիստոնէայ իսաչիւրներուն, որոնք քանիցս փրկուեցան հայ թագաւորներուն ու իշխանապետներուն սպայական բանակներուն շնորհիւ, որոնց մասին Հռոմի պապերը հրովարտակներով աշխարհ իրապիկ պահեցին:

Բայց 16 Ապրիլ 1375ին, Աւազ Երկուշաբթիի օրը, գերի ինչաւ Հայոց վերլին թագաւորը, թեան Զ. Լուսինեան, ու վերջ գտաւ հայկական թագաւորութիւնը, որ մեր նահապետական լըրջանի Հայկի ու Արամի օրերէն ի վեր կը շարունակուէր երբեմն արինաթաթախ բայց միշտ

կենսալի ու ոգեւորուած: Անկախութեան անկումէն վերջ, Հալը ինքզինքը գտաւ հակաքրիստոնէական խնէշ միջոցառողի մը մէջ:

Ազգ մը որ կոցած էր տոկալ ու զարգանալ ու Արեւելքի երբեմնի քաղաքակրթիչ փարոսներէն մին գտնալ, չմոռնալով սակայն իր, ցեղն ու հայրենիքը, իր լեզուն ու աւանդութիւնները, պիտի կարենար համբերատարօրէն տանել բալոր դժուարութիւնները ու դիմադրաւել ձինկիզխանի, Թիմուրէնի, Տուղրիկի, Ալիաշայի եւ այլ արհնարարու աշխարհակարնհրու փոթութիւնները, դիտուած իր Տիգրաններու, Տրդատներու, Վարդաններու, Աշոտներու և Ռաբէններու բարոյական ոգիով, ու այսպէս վեց դարերու դեմութենէ մը վերջ, երբ մեծագոյն արհաւիրքները դործադրուեցան Հայոց դէմ, երբ արեւմտեան Հայաստանը դատարկուեցաւ իր հայ Ժողովուրդէն, երբ հայ Ժողովուրդը իր կենսատու Ժառար առաջնորդներէն զրկուեցաւ ու Հայ Եկեղեցին փորձեցաւ իր ձեռքերով եկեղեցականներէն ցանդը, Հայաստան կոչաւ կրկին յարկաւոր առնել՝ Արարատեան բարձրագոյնդակին վրայ: Հին Անիին կից՝ նոր մը նուիրադրոնեցաւ ու այսօր Հայոց նոր ոտան յերանք կը համարուի Արեւելքի ահէնէ յառաջագէմ ու իւրապականացած կարեւոր քաղաքներէն մին ու թերեւտ մօտ ատենէն գառնայ՝ Անիին նման՝ քաղաքներու թագուհին:

Հայաստանի ահէնադիտաւոր շրջանը եղած էր «Արտաշեսեան» հարստութիւնը տրուն անկումէն յետոյ կը սկսին հայկական ահաւոր դժբախտութիւններն ու մանաւանդ հայկական դաշիւրուն չարանները:

Բայց դարձեալ կենսունակ մնացած էր Հայոց անկախութեան դիմունք, որովհետեւ «Արտաշեսեան» Հայաստանի յաջորդող Արշակունեաց, Բագրատունեաց ու Ռուբինեաց հարստութիւններու լրջաններուն, հայ ազգը ունեցաւ 59 թագաւորներ ու երկու նշանաւոր փրկարար դիվանատներ, Արտաւազգ ու Մանուկ Մամիկոնեանները, 252-287 ու 378-385, որոնց նմանը հազիւ կրնանք հանդիպել հին Յունաստանի պատմութեան մէջ:

Հայաստանի արդի Խորհրդային Հանրապետութիւնը 1918էն ի վեր կ'ապրի ու կը գործէ

(Նախ իբր ազգայնական պետութիւն, յետոյ իբր անդամ Խորհրդային Հանրապետութեանց Միութեան) ողակս յաւորդէր Ռուբինեան Հայկական Թագաւորութեան :

Այս Հանրապետությանը, իր շինարարական
հզոր վերելքով ու մասնորական ու քաղաքակր-
թական մեծ շառաղագյամներով, կը ցուցնէ մէկ
նոր երեւոյթը Հայկական Հրաշքին, որ կը սկսի

Հայկ Նահապետի առանդական ու խորհրդանշա-
նական դէմքով, կը զգրանայ ու կը գեղարար-
դուի Տիգրան Մեծով, կը շարունակուի Ռու-
բինեաներով ու ոչ վերադարձի Ֆորդը - Հա-
յաստանի ԲՏԷ, որուն սահմանները վաղը պիտի
հասցաորթին անշուշտ Արշակունեաց Հայաստանի
սահմաններուն:

ՆԻԿՈՍԻԱ (Կիսրուն, ՆՈՒՊԱՐ ՄԱԲՍՈՒՏԵԱՆ



ԿԵԱՆՔԻՆ ՄԷՋ

Դեռ՝ երազող մանկութեանս ցատկերն ազաւ կը
տննենք,
Ալէքեոսս դէմ՝ տես, ռուս քիչ մ'աւել կ'ազմ
ցըրուած,
Կեանքն այդ ամբողջ-եւ խաղաղութեան ցոյցն
կը յիշեն,
Բայց կը լքցուիմ, կը պտուղկամ՝ իմ ներկայակա
նացող տանը :

Նայել՝ ո՞րի՝ Տէր, իմ .և.ոգացայ ամերիկներում այժմ-
 անում վառ
 Որոնք՝ լուսիդո տակի՝ յառնարի՝ կ'ամենի տակե՛ն
 ամառաւուն
 Եւ կը բանում իմ .համար մարմայ .մը Նոր .առ
 Իմ .հայրնայ .
 Բն .հայրը .հայրը կ'ամենի իմ .հայ կը 'զգամ .զին
 ,հայրը .հայրը :

ՀԱՆՔԵԱՆ այս ևս չէ կոտորվում ֆոթոէլ լույս միջոտ՝
 ԽԱՍԱՍԱՔԻ
 Ա՛յ ամիշաշկանդ հոգիով էս Խասանի ևս քո սիտի
 կեանքն ըլլա՛յ զինդ, Խամակուսած կրթանկար-Խեմբեր
 ու սիրով՝

Ի՞նչ կ'ստանձալ մ'արեւոտ պիտի ապրիմ եւ այսօր
 Աւ պիտի իրգս իմ 'երգեմ 'ելկընքի մը տակ բա-
 տար,
 Պիտի հագուշս մէջ տիրող երազին հնրը Գալիմ:

Նիկոզիա

Մ. ԳԵՐՄԱՆԻԿԵԱՆ